

Ժին ունէին: Արդարեւ, 1683ը դարձակէտ մըն է Օսմ. պատմութեան մէջ: Թուրքերը այդ թուականին կը կրկնէին թրքական արշաւանքը դէպի Կեդրոնական Եւրոպայի սիրտը:

Մեծ եպարքոս Գարա-Մուսթաֆա փաշա 250-000-նոց բանակով մը կը մտնէր Աւստրիա եւ կը քալէր Վիեննայի վրայ, վասնզի ապստամբութիւն մը սկըսած էր Աւստրո-Հունգարիոյ մէջ:

Եպարքոսը որոշած էր գրաւել Կեդր. Եւրոպայի այս մասը, վերջ տալ աւստրիական կայսրութեան, ապա մէկ թեւով շարժիլ դէպի Արեւելք՝ Լեհաստանի վրայ, միւս թեւով՝ Ալպանները անցնելով մտնել Իտալիա: Տեղեակ այս ծրագրին՝ քրիստոնեայ աշխարհը լարեց իր բոլոր ճիգերը, Թուրքերու դէմ կռուելու համար:

Վիեննայի պաշարումը երկու ամիս տեւեց: Մայրաքաղաքը կը պաշտպանէին ուսանողներ, առեւարականներ եւ արհեստակցական միութիւններ, բայց սակաւ անբաւական էր կայսրութիւնը փրկելու:

Ժան Սոպիեցքի, որուն ամէնէն մեծ իղձն էր Թուրքերը Եւրոպայէն վանել, փութաց կայսեր օգնութեան՝ 50,000-նոց բանակով մը, որուն մէկ տասնորորդը՝ այսինքն 5000ը Հայեր էին:

Միւս կողմէն, Գերմանիոյ բոլոր իշխանութիւնները կամաւոր մեծ զունդեր կու տային: Այսպէս ձեռք ձեռքի տուած, լեհեգերման բանակները Վիեննայի սուջէ յաջողեցան մեծ հարուած մը տալ Օսմ. բանակին: Գարա-Մուսթաֆա փաշա գերի ինկաւ եւ գլխատուեցաւ: Թրքական 200 000 զինուորները՝ անգլուխ, խուճապի մատնուեցան եւ խոյս տուին մինչեւ թրքական Հունգարիա եւ Պելկրատ:

Այս պատերազմին մէջ կարեւոր դեր կատա-